




Բովանդակություն

Բովանդակություն	1
Օգտագործված տնտեսական ցուցանիշների համառոտագիր	2
Ֆինանսական դիրք	3
Վարկային պորտֆել և համեմատականներ	3
Տրամադրված վարկերի ծավալը	3
Վարկերի կառավարում	6
Վերլուծական գործակիցներ	7

Օգտագործված տնտեսական ցուցանիշների համառոտագիր


ՀՀ վարկային կազմակերպությունների միության անդամներն իրենց տնտեսական գործունեության վերաբերյալ ՀՀ վարկային կազմակերպությունների միությանն (ՀՀ ՎԿՄ) ամսական կտրվածքով տրամադրում են տասը տնտեսական ցուցանիշներ: Այդ ցուցանիշների հիման վրա Վարկային կազմակերպությունների միությունն իրականացնում է ֆինանսական վերլուծություն, որի նպատակն է միության անդամներին ներկայացնել վարկային ինդուստրիայում տեղի ունեցող տնտեսական շարժերը: Ցուցանիշների մի մասը հրապարակային տեղեկատվություն է, որոնք տեղ են գտնում վարկային կազմակերպությունների կողմից ներկայացվող եռամսյակային հաշվետվություններում: Մակայն սույն վերլուծության համար ՎԿՄ-ի անդամ կազմակերպությունների կողմից տրամադրվում են նաև այնպիսի տնտեսական ցուցանիշներ, որոնք տեղ չեն գտնում հրապարակային եռամսյակային հաշվետվությունների մեջ:



Ֆինանսական դիրք

- **Ակտիվներ:** ՀՀ ՎԿՄ անդամների համախառն ակտիվները 2016թ.-ի նոյեմբերի 30-ի դրությամբ կազմել են 117.2 մլրդ դրամ՝ 2015թ.-ի նոյեմբերի նկատմամբ նվազելով 1.8%-ով, իսկ 2016թ.-ի հոկտեմբերի նկատմամբ՝ 1.6%-ով (Գծ.1):
- **Վարկային Պորտֆել:** ՀՀ ՎԿՄ անդամների վարկային պորտֆելը 2016թ.-ի նոյեմբերի 30-ի դրությամբ կազմել է 100.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նոյեմբերի նկատմամբ ունենալով նվազելով 2.8%-ով, իսկ 2016թ. հոկտեմբերի նկատմամբ աճելով՝ 1.2%-ով:
- **Կապիտալ:** ՀՀ ՎԿՄ անդամների ընդհանուր կապիտալը 2016թ.-ի նոյեմբերի վերջի դրությամբ կազմել է 38.4 մլրդ դրամ՝ 2015թ.-ի նոյեմբերի նկատմամբ աճելով 6.6%-ով, իսկ 2016թ.-ի հոկտեմբերի նկատմամբ՝ 0.3 %-ով:

Գծապատկեր 1. ՀՀ ՎԿՄ անդամների ֆինանսական դիրքը 2015-2016թթ.-ների նոյեմբերի վերջի դրությամբ




Վարկային պորտֆել և համեմատականներ

Տրամադրված վարկերի ծավալը

- 2016թ.-ի նոյեմբեր ամսին ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրվել է 9.5 մլրդ դրամի վարկ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 3.7%-ով, իսկ 2016թ.-ի հոկտեմբերի նկատմամբ աճել է 11.3%-ով (Գծ. 2):


Գծապատկեր 2. ՀՀ ՎԿՄ անդամների կողմից հունվար-նոյեմբեր ամսին տրամադրված վարկերի ծավալը




Տրամադրված վարկերի քանակը

- 2016թ.-ի նոյեմբեր ամսին ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրվել է 13,065 վարկ, որը նախորդ ամսվա նկատմամբ աճել է 11.8%-ով, իսկ 2015թ.-ի նոյեմբերի նկատմամբ 3.0%-ով (Գծ. 3):
- 2016թ.-ի նոյեմբեր ամսի վերջի դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամները ունեցել են 135,328 ակտիվ վարկառուներ: Ակտիվ վարկառուների քանակը 2015թ.-ի նոյեմբերի նկատմամբ նվազել է 7.2%-ով, իսկ 2016-ի հոկտեմբերի նկատմամբ՝ 0.8%-ով:
- ՀՀ ՎԿՄ անդամների կողմից 2016թ.-ի նոյեմբերին տրամադրված վարկերի միջին մեծությունը կազմել է 741 հազար դրամ, իսկ վարկային պորտֆելի միջին վարկի մեծությունը նույնպես կազմել է 724 հազար դրամ: Նույն ցուցանիշները 2015թ.-ի նոյեմբերին կազմել են համապատասխանաբար՝ 708 և 774 հազարական դրամ (Գծ. 4):

Գծապատկեր 3. ՀՀ ՎԿՄ անդամների կողմից հունվար-նոյեմբեր ամսին տրամադրված վարկերի քանակը




Գծապատկեր 4. ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրված վարկերի միջին մեծությունը



Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ

- 2016թ.-ի նոյեմբերի դրությամբ միության անդամները միասին վերցրած ՀՀ ամբողջ տարածքում ունեցել են 137 մասնաճյուղ, որը, համեմատած 2015թ.-ի նոյեմբերի հետ աճել է 2-ով:
- ՀՀ ՎԿՄ անդամները 2016թ.-ի նոյեմբերի դրությամբ ունեցել են 602 վարկային մասնագետ, որը 44-ով նվազել է 2015թ.-ի նոյեմբերի աշխատակիցների թվի համեմատ:
- 2016թ.-ի նոյեմբերին ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրված վարկերի գծով մեկ վարկային մասնագետի հաշվով միջին վարկային պորտֆելը կազմել է 15.7 մլն դրամ, նախորդ ամսին՝ 14.3 մլն դրամ, իսկ 2015թ.-ի նոյեմբերի համեմատ այն կազմել է 15.2 մլն դրամ: (Գծ. 5):
- 2016թ.-ի նոյեմբերի վերջի դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամների վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով կազմել է 166.6 մլն դրամ, նախորդ ամսվա 166.9 մլն դրամի և 2015թ.-ի նոյեմբերի 160.3 մլն դրամի համեմատ:


Գծապատկեր 5. ՀՀ ՎԿՄ անդամների միջին վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով



Վարկերի կառավարում

- **Մինչև 30 օր ժամկետանց պորտֆել:** ՀՀ ՎԿՄ անդամների մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը 2016թ.-ի նոյեմբերի վերջի դրությամբ կազմել է 1,061.9 մլն դրամ, նախորդ ամսվա 1,131.3 մլն դրամի և 2015թ.-ի նոյեմբերի՝ 1,372.8 մլն դրամի համեմատ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը նվազել է 22.6%-ով, իսկ 2016թ.-ի հոկտեմբերի նկատմամբ՝ 6.1%-ով: 2016թ.-ի Նոյեմբերի վերջի դրությամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 1.06%-ը, 2016թ.-ի հոկտեմբերին՝ 1.14%-ը (Գծ. 6):
- **Ժամկետանց պորտֆել 30 օրից ավել:** ՀՀ ՎԿՄ անդամների 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը 2016թ.-ի նոյեմբերի վերջի դրությամբ կազմել է 3,081.7 մլն դրամ, նախորդ ամսվա 3,302.7 մլն դրամի և 2015թ.-ի նոյեմբերի՝ 4,005.1 մլն դրամի համեմատ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը նվազել է 23.1%-ով, իսկ 2016թ.-ի հոկտեմբերի նկատմամբ 6.7%-ով: 2016թ.-ի նոյեմբերի վերջի դրությամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 3.07%-ը, 2016թ.-ի հոկտեմբերին՝ 3.33%-ը:
- **Զուտ դուրսգրումներ:** 2016թ.-ի նոյեմբերի վերջի դրությամբ միության անդամ վարկային կազմակերպությունների զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է 4,259.9 մլն դրամ, նախորդ ամսվա 3,899,6 մլն դրամի և 2015թ.-ի Նոյեմբերի՝ 2,097.8 մլն դրամի համեմատ: Զուտ դուրս գրված վարկերի ծավալը 2016թ.-ի Նոյեմբերին նախորդ ամսվա նկատմամբ աճել է 9.2%-ով, իսկ 2015թ.-ի Նոյեմբերի նկատմամբ՝ մոտ 1.03 անգամ: Միության անդամների սույն թվականի նոյեմբերին զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է համախառն վարկային պորտֆելի 4.25%-ը, նախորդ ամսվա 3.93%-ի և 2015թ.-ի նոյեմբերի 2.03%-ի համեմատ:

Գծապատկեր 6. ՀՀ ՎԿՄ անդամների վարկերի ծավալները Նոյեմբերի 30-ի դրությամբ



Վերլուծական գործակիցներ

- 2016թ.-ի նոյեմբերի դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամների համախառն վարկային պորտֆելի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 85.6%, որը վկայում է այն մասին, որ ակտիվների ծանրակշիռ մեծամասնությունը ուղղվում է վարկավորմանը: Նույն ցուցանիշը 2015թ.-ի նոյեմբերին կազմել է 86.4% (Գծ. 7):
- Սույն թվականի նոյեմբերի դրությամբ միության անդամների ընդհանուր կապիտալի և վարկային պորտֆելի հարաբերակցությունը կազմել է 38.3%: Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ միության անդամների վարկավորման ծավալի ավելի քան 38%-ը իրականացվում է սեփական կապիտալի հաշվին: Նույն ցուցանիշը 2015թ.-ի նոյեմբերին կազմել է 34.9%:
- 2016թ.-ի նոյեմբերի վերջի դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամների ընդհանուր կապիտալի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 32.8%, որը վկայում է միության անդամ վարկային կազմակերպությունների բարձր կապիտալիզացիայի մասին: Նույն ցուցանիշը 2015թ.-ի Նոյեմբերին կազմել է 30.2%:
- Ընդհանուր պարտավորությունների և կապիտալի հարաբերակցության ցուցանիշը ցույց է տալիս միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունների չափը:

Այս ցուցանիշը ցույց է տալիս նաև վարկային բիզնեսի կառավարման արդյունավետության մակարդակը: 2016թ.-ի Նոյեմբեր ամսվա դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամների համար այս գործակիցը կազմել է 2.05, այսինքն միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունները 2.05 անգամ գերազանցել է կապիտալի մակարդակը: Նույն ցուցանիշը նախորդ տարվա Նոյեմբերի համար կազմել է 2.31:

Գծապատկեր 7. ՀՀ ՎԿՄ անդամների վերլուծական գործակիցներ

